ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հուլիսի 2011 թվական թիվ 68-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2010Թ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՉԱՓԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Բաժնետիրական ընկերությունների մասին" ՀՀ օրենքի 49-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի թիվ 202-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ, 12-րդ և 13-րդ կետերով

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության 100 տոկոս պետական մասնակցությամբ առևտրային ընկերությունների 2010թ տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի չափերը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ընկերությունների տնօրեններին եռամսյա ժամկետում, բայց ոչ ուշ քան մինչև ս/թ հոկտեմբերի 1-ը, ապահովել շահութաբաժնի փոխանցումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900005200424 հաշվին:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ռ.Ներսեսյանի վրա:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

08 հուլիսի 2011թ.
ք. Իջևան

Հավելված
ՀՀ Տավուշի մարզպետի
“08” հուլիսի 2011թ
թիվ 68 -Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2011Թ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՉԱՓԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

h/h	Ընկերության անվանումը	2010թ տարեկան արդյունքներով առաջացած զուտ շահույթը /հազար դրամ/	ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի չափը /հազար դրամ/	կուտակման հիմնադրամի ստեղծում /հազար դրամ/
1	Իջևանի բժշկական կենտրան	1096.0	0.0	1096.0
2	Բերդի բժշկական կենտրոն	2048.0	1024.0	1024.0
3	Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն	572.0	286.0	286.0
4	Սևքարի բժշկական ամբուլատորիա	245.0	122.5	122.5
5	Արծվաբերդի առողջության կենտրոն	31.6	15.8	15.8
6	Այգեձորի առողջության կենտրոն	151.0	75.5	75.5
7	Այրումի բժշկական ամբուլատորիա	25.0	12.5	12.5
8	Այգեհովիտի առողջության առաջնային պահպանման կենտրոն	107.9	0.0	107.9
9	Հաղարծնի առողջության առաջնային պահպանման կենտրոն	358.0	2.5	355.5
10	Ն.Կ.Աղբյուրի առողջության առաջնային պահպանման կենտրոն	279.7	29.2	250.5
	ԸՆԴԱՄԵՆԸ	4914.2	1568.0	3346.2

Մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Ս.Դավթյան